«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Եվգենյա Հայրիյան
ԱրՊՀ, տնտեսագիտության ֆակուլտետ, տ.գ.թ., դոցենտ
evgenyahayriyan@mail.ru

Ներկայիս գլոբալացման պայմաններում, տնտեսության զարգացվածության ապահովման տեսանկյունից կարևորվում է պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական աճի ապահովման կարևոր գործոններից է արտահանման ազդեցությունը: Զարգացած և զարգացող երկրները արտաքին տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ հաշվի են առնում պետության մրցակցային առավելությունները, որի հիմքում ընկած է տնտեսության կառուցվածքային արդյունավետ զարգացումը:

Անկախության հռչակումից ի վեր Արցախի հանրապետությունում վարվում է արտահանման խթանմանն ուղղված քաղաքականություն: Չնայած դրան, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախի հանրապետությունում վճարային հաշվեկշիռը բացասական է:

Աղյուսակ 1. Արտահանման և ներմուծման ծավալները ԱՀ-ում 2011-2016թթ. [1]հազար ԱՄՆ դոլար

Անվանումը	2011	2012	2013	2014	2015	2016
Արտահանում	79577,9	57765,7	59636,4	64663,6	62082,2	81106,3
Ներմուծում	313129,1	291246,5	268833,2	301986,9	252474,9	256859,2

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, դիտարկվող ժամանակահատվածում արտահանման ծավալները զիջել են ներմուծման ծավալներին: Տնտեսության զարգացմանը զուգահեռ կրճատվել է նաև արտահանման ու ներմուծման միջև ճեղքվածքը: Եթե 2012 թվականին արտահանման ծավալները զիջում էին նեմուծման ծավալներին 4-4.5 անգամ, ապա 2016 թվականին արտահանումը զիջում էր ներմուծմանը մոտ 3 անգամ, ինչը պայմանավորված էր արտահանման աճի առաջանցիկ տեմպով ներմուծման նկատմամբ: Դիտարկվող ժամանակաշրջանից 2012 թվականին արտահանման ծավալները դրսևորել են նվազման տեսքով, ինչը պայմանավորված էր միջազգային շուկայում հանքահումքային ապրանքների գների նվազմամբ: Այնուհետև, արտահանման ծավալները դրսևորել են աճի դինամիկա, բացառությամբ 2015 թվականի, և 2012-2016 թթ. ընկած ժամանակահատվածում արտահանման ծավալների միջին տարեկան աճը կազմել է 9.6%: 2011-2016 թթ. ընթացքում ներմուծման ծավալները մեծ մասամբ դրսևորել են նվազման տեսքով՝ միջին տարեկան կտրվածքով նվազելով 3.5%-ով:

[1] www.stat-nkr.am/Տեղեկագրեր 2011-2016թթ.



Գծապատկեր 1. Արտահանման տեսակարար կշիռը արտաքին առևտրաշրջանառության մեջ ԱՀ-ում 2011-2016 թթ,%[1]

Ինչպես երևում է գծապատկերից՝ ներմուծման նկատմամբ արտահանման ծավալների աճի առաջանցիկ տեմպերով պայմանավորված, արտահանման տեսակարար կշիռը ընդհանուր արտաքին առևտրաշրջանառության մեջ, սկսած 2012 թվականից, դրսևորել է աճի միտում՝ բացառությամբ 2015 թվականի, և 2016 թվականին այդ ցուցանիշը կազմել է 24%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18%-ով:



Գծապատկեր 2. Որոշ ապրանքների արտահանման դինամիկան ԱՀ-ում 2011-2016 թթ[2]:

Արցախի Հանրապետության արտահանման կառուցվածքում շարունակում են գերակշիռ մաս կազմել հանքահումքային ապրանքները, ինչը զարգացող երկրների բնութագրական հատկանիշներից է: Բացի հանքահումքային

[1] www.stat-nkr.am/Տեղեկագրեր 2011-2016թթ.
[2] www.stat-nkr.am/Տեղեկագրեր 2011-2016թթ.

ապրանքներից հանրապետությունում արտահանման մեջ մեծ դերակատարություն ունեն նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանից պատրաստված իրերը, բուսական ծագման արտադրանքը, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը, պատրաստի սննդի արտադրանքը: Նշված ապրանքների տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ 2011-2016 թվականներին կազմել է միջինը 85%: 2011-2012 թվականներին նշված ցուցանիշը կազմում էր մոտ 88%, այնուհետև 2013-2015 թվականներին նկատվեց տեսակարար կշռի նվազում մինչև 80%, իսկ 2016 թվականին հինգ ապրանքախմբերի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ կազմել էր 88 %: Այս ցուցանիշի տատանումները հիմնականում պայմանավորված էին հանքահումքային ապրանքների արտադրության և արտահանման ծավալների տատանումներով, որոնք իրենց հերթին պայմանավորված էին ինչպես ներքին ռեսուրսների ծավալներով, այնպես էլ միջազգային շուկայում հանքահումքային ապրանքների գների նվազմամբ:

Արտահանման ծավալների աճի գործոնային վերլուծության ժամանակ պետք է վերլուծության ենթարկել նաև արտահանման միջին հակվածությունը, որը ցույց է տալիս արտահանման տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի մեջ: Վերջինս բնութագրում է նաև երկրում առկա տնտեսական աճի ու արտահանման ծավալների աճի տեմպերի միջև կապը:

Աղյուսակ 2. Արտահանման միջին հակվածությունը Արցախի Հանրապետությունում 2011-2016թթ.[1]

Անվանումը	2011	2012	2013	2014	2015	2016
Արտահանման միջին հակվածությունը (արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ) %	22,7	15,5	14,5	16,2	14,2	17

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, արտահանման միջին հակվածությունը դիտարկվող ժամանակահատվածում իր առավելագույն դրսևորումն է ունեցել 2011 թվականին: 2012 թվականին, արտահանման ծավալների անկմամբ պայմանավորված, ցուցանիշը նվազել է 31.7 տոկոսով, այնուհետև նվազման տեմպերը դանդաղել են 2013 թվականին և 2014 թվականին արտահանման միջին հակվածությունը աճել է 11.7 տոկոսով՝ պայմանավորված արտահանման ծավալների աճով: 2015 թվականին նախորդ տարվա համեմատ ցուցանիշը անկում է գրանցել 12.3%՝ արտահանվող ապրանքների գների նվազմամբ, և 2016 թվականներին այն կայունացել է որոշ չափով և կազմել է 17%, ինչը 2011 թվականի հետ համեմատ նվազել է 5.7 տոկոսային կետով:

Յուրաքանչյուր պետություն ձգտում է արտահանման կառուցվածքում հումքային ապրանքները փոխարինել վերջնական սպառման ապրանքներով:

[1] www.stat-nkr.am/Տեղեկագրեր 2011-2016թթ.

Վերջնինիս ապահովման նպատակով Արցախի Հանրապետությունում անցած 25 տարիների ընթացքում վարվում է արտահանման խթանման քաղաքականություն: Վերջինս դրսևորվում է հարկային և այլ արտոնությունների տրամադրման տեսքով, որոնք տարածվում են այն արտահանողների վրա, ովքեր արտահանում են ՀՀ մաքսային սահմանից դուրս:

2011-2016 թվականների ընթացքում Արցախի Հանրապետության արտահանման մեջ տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ:



Գծապատկեր3. Որոշ ապրանքների տեսակարար կշռի դինամիկան ընդհանուր արտահանման մեջ ԱՀ-ում 2011-2016 թթ[1]:

2011-2016 թվականներին արտահանման կառուցվածքում հանքահումքային ապրանքների տեսակարար կշիռը ընդհանուր առմամբ դրսևորել է նվազման միտում՝ 62.1%-ից հասնելով մինչև 43.8%:

Պատրաստի սննդի արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ 2011-2013 թվականների ընթացքում դրսևորվել է աճի տեսքով՝ 8.3%-ից մինչև 11.6%, իսկ 2014 թվականից սկսած այն դրսևորել է նվազման դինամիկա և 2016 թվականին այն կազմել է 5.4%: Բուսական և կենդանական ծագման արտադրանքների տեսակարար կշիռն ընդհանուր արտահանմման կառուցվածքում 2016 թվականին կազմել է համապատասխանաբար 17.2% և 7.4%: Նշված ցուցանիշները 2011 թվականի հետ համեմատած աճել են 2.3 և 2.8 անգամ:

Արցախի Հանրապետությունում 2011-2016 թվականների ընթացքում ապահովվել է արտահանման ծավալների աճի առաջանցիկ տեմպը ներմուծման նկատմամբ, ինչի արդյունքում կրճատվել է արտահանման և ներմուծման միջև առկա բացասական ճեղքվածքը: 2011 թվականի հետ համեմատած նշված

[1] www.stat-nkr.am/Տեղեկագրեր, 2011-2016թթ.

ցուցանիշը կրճատվել է մոտ 14 տոկոսով, ինչը պայմանավորված էր արտահանման ծավալների աճի առավել բարձր մակարդակով:

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Արցախի Հանրապետության տնտեսության կայուն զարգացումն ապահովելու տեսանկյունից կարևորվում է արտահանման ծավալների շարունակական աճը: Այս առումով իրականացվում են հարկային և մի շարք այլ արտոնություններ արտահանման խրախուսման նպատակով: Արցախի Հանրապետությունում արտահանման կառուցվածքում շարունակում են մեծ դերակատարություն ունենալ հանքահումքային ապրանքները: Երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորվում է արտահանման կառուցվածքում հանքահումքային ապրանքների փոխարինումը պատրաստի արտադրանքով, իսկ վերջինս էլ շղթայական ռեակցիայով իր դրական ազդեցությունը կունենա հանրապետությունում երկարաժամկետ տնտեսական աճի տեմպի ապահովման գործընթացում:

Եվգենյա Հայրիյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր. *Տնտեսական աճ, արտահանում, ներմուծում, վճարային հաշվեկշիռ, հանքահումքային ապրանքներ*

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Արցախի Հանրապե-տության տնտեսության կայուն զարգացումն ապահովելու տեսանկյունից կարևորվում է արտահանման ծավալների շարունակական աճը: Արցախի Հանրապետությունում արտահանման կառուցվածքում շարունակում են մեծ դերակատարություն ունենալ հանքահումքային ապրանքները: Երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորվում է արտահանման կառուցվածքում հանքահումքային ապրանքների փոխարինումը պատրաստի արտադրանքով, իսկ վերջինս էլ շղթայական ռեակցիայով իր դրական ազդեցությունը կունենա հանրապետությունում երկարաժամկետ տնտեսական աճի տեմպի ապահովման գործընթացում:

Евгения Айриян

АНАЛИЗ СТРУКТУРЫ ЭКСПОРТА И ЕГО РОЛЬ В ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Ключевые слова: *экономический рост, экспорт, импорт, платежный баланс, минеральные продукты*

Как в каждой республике, так и в Республике Арцах, в целях обеспечения устойчивого экономического роста, важное значение имеет продолжающийся рост экспорта. В структуре экспорта Арцаха продолжает важную роль играть горнодобывающие продукты. Для обеспечения долгосрочного экономического роста, важно в структуре экспорта горнодобывающие продукты заменить на готовую продукцию, в результате чего эта, с помощью цепной реакции, будет иметь положительное влияние на экономику государства в процессе обеспечения долгосрочного экономического роста.

Yevgenya Hayriyan

THE EXPORT STRUCTURE ANALYSIS AND ITS ROLE IN THE PROCESS OF ECONOMIC GROWTH of ARTSAKH REPUBLIC

Key words: *economic growth, export, import, payment balance, mineral products*

As in every state, also in Artsakh Republic, in order to ensure sustainable development, the continuous growth of export volumes is highlighted. In Artsakh Republic the export structure continues to play a major role in the mining industry. For the long-term economic growth, the replacement of raw materials in the structure of exports by the finished products is highlighted, and the latter will have a positive impact on the chain reaction, in the process of ensuring long-term economic growth in the republic.